Հավելված
Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի
հուլիսի 30-ի թիվ 128-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ 5

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 7

2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 13

3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14

II. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 16

1. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ 21

2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 22

3. ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 27

4. ԴՈՏԱՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ 27

5. ՌԴ ԿՈՂՄԻՑ ՀՀ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ 28

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 29

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 29

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 78/Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ֆինանսների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ ֆինանսների նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2019 թվականի դեպտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919 որոշում, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ» և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. մարտի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2020թ. հունիսի 8-ից մինչև 2020թ. հուլիսի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտները հատատատվել են 1,695,009,852.1 հազ. դրամ գումարի չափով, որից՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարը կազմել է 1,602,252,712.8 հազ.դրամ, պաշտոնական դրամաշնորհները՝ 35,324,420.2 հազ. դրամ, այլ եկամուտները՝ 57,432,719.1 հազ. դրամ:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների և 2018, 2019 թվականների ժամանակաշրջանների համադրելի ցուցանիշները հետևյալն են.

(Աղյուսակ 1)

Եկամտատեսակը	2018**թ**. (**փաստ**)		2019**թ**. (**փաստ**)		2020**թ**.	
	մլրդ դրամ	%-**ը**	**մլրդ դրամ**	%-**ը**	**մլրդ դրամ**	%-**ը**
Ընդամենը, որից՝	1,341.7	100.0%	1,565.5	100.0%	1,695.0	100.0%
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,258.1	93.8%	1,464.3	93.5%	1,602.3	94.5%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	11.2	0.8%	12.4	0.8%	35.3	2.1%
3. Այլ եկամուտներ	72.3	5.4%	88.8	5.7%	57.4	3.4%

Հաշվի առնելով, որ գանձվելիք մաքսավճարը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն դասակարգվել է որպես պետական տուրք, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի աղյուսակում և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ, որով հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարը ավելացվել է 5,500.0 մլն դրամ գումարով և նույն չափով նվազեցվել է այլ եկամուտների գումարը:Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ կառավարության 2019 թվականի 26 դեկտեմբերի N 1919–Ն որոշմամբ (Հավելված 2) Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի եկամուտների հավաքագրման եռամսյակային բաշխումն՝ ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի հաստատվել է հետևյալ համամասնությամբ.

(Աղյուսակ 2)
հազ.դրամ

Եկամտատեսակ	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Պետական բյուջեի եկամուտներ	357,837,487,8	808,147,342,6	1,218,708,774,8	1,695,195,470,0
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	340,093,394,2	770,271,300,7	1,160,072,837,0	1,607,752,712,8
Պաշտոնական դրամաշնորհներ	5,437,007,9	12,563,487,6	19,781,603,8	35,510,038,1
Այլ եկամուտներ	12,307,085,7	25,312,554,3	38,854,334,0	51,932,719,1

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ցուցանիշներում ներառվել են նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները և վերջիններիս արդյունքում ձևավորված եկամուտները, ինչպես նաև ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում պետական բյուջեում կատարված փոփոխությունների արդյունքում 2020թ. պետական բյուջեի եկամուտների տարեկան և եռամսյակային ճշտված ծրագրային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1,700.1 **մլրդ դրամ** և 362.7 **մլրդ դրամ**:

2020թ. առաջին եռամսյակի արդյունքներով պետական բյուջեի եկամուտների ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 3)
մլրդ.դրամ

Բյուջեի եկամուտներ	Եռամսյակի ճշտված պլան	Փաստ		Կատարման աստիճան պլանի նկատմամբ
		Գումար	Տեսակարար կշիռ	
Ընդամենը	362.67	370.28	100%	102.1%
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	342.7	349.0	94.3%	101.8%
Պաշտոնական դրամաշնորհ	5.4	1.8	0.5%	33.3%
Այլ եկամուտներ	14.5	19.4	5.2%	133.9%

Պետական բյուջեի եկամուտների 94.3%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 0.5%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների, 5.2%-ը՝ այլ եկամուտների հաշվին:

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջե փաստացի մուտքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարը կազմել է 349 մլրդ դրամ գումար՝ 101.8%-ով ապահովելով ՀՀ կառավարության եռամսյակային ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշը:

- 34.2%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով 119.3 մլրդ դրամ, որից 64.3 մլրդ դրամը ստացվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից, այդ թվում՝ 24.6 մլրդ դրամը գանձվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Մնացած 55 մլրդ դրամը գանձվել է ՀՀ-ում արտադրվող ապրանքներից և ծառայություններից:
- 31.3%-ը ապահովվել է եկամտային հարկի հաշվին՝ կազմելով 109.4 մլրդ դրամ:
- 10.9%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 37.9 մլրդ դրամ:
- 7.8%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 27.2 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 17.8 մլրդ դրամ, հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 9.4 մլրդ դրամ: Նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ակցիզային հարկի գծով եկամուտները աճել են 16.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխությունների արդյունքում ակցիզային հարկի դրույքաչափերի աճով և նոր դրույքաչափերի հաստատմամբ:

- 4.8%-ն ապահովվել է մաքսատուրքի հաշվին՝ կազմելով 16.9 մլրդ դրամ,
- 2.6%-ը ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 8.9 մլրդ դրամ,

- 1.7%-ը ապահովվել է սոցիալական վճարի հաշվին՝ կազմելով 5.8 մլրդ դրամ,
- 2.3%-ը ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների հաշվին՝ կազմելով 8 մլրդ դրամ: Մուտքերից շուրջ 5.1 մլրդ դրամը կազմել է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթին:
- 1.7%-ը ապահովվել է այլ հարկերի հաշվին՝ կազմելով 5.8 մլրդ դրամ, մասնավորապես՝ 2.1 մլրդ դրամ կազմել են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները, 1.9 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 794.9 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար սահմանված տուգանքները, 438.2 մլն դրամ՝ ճանապարհային հարկը, 301.2 մլն դրամ՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարը, 210.8 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 20.1 մլն դրամ՝ արտոնագրային հարկը:
- Հաշվետու ժամանակահատվածում հարկերի անցումային գերավճարից մարված հարկային պարտավորությունների գումարը կազմել է 134.7 մլն դրամ:

- 2.8%-ը ապահովվել է պետական տուրքերի հաշվին՝ կազմելով 9.9 մլրդ դրամ: Վճարված պետական տուրքերը կազմել են եռամսյակային ծրագրի 97.9%-ը: Մասնավորապես՝ ավելի քան 3.8 մլրդ դրամ են կազմել օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, 3.1 մլրդ դրամ՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ ու արտոնագրեր (թույլտվություններ) տալու և շուրջ 1.4 մլրդ դրամ՝ պետական գրանցման համար գանձվող տուրքերը, որոնք առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշն ապահովել են համապատասխանաբար 108.1%-ով, 88%-ով և 108.3%-ով: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ պետական տուրքի գծով մուտքերն աճել են 22.7%-ով կամ 1.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու ու օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվող տուրքերի աճով՝

համապատասխանաբար 77.1%-ով (1.4 մլրդ դրամով) և 18%-ով (588.4 մլն դրամով): Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է 2020 թվականի փետրվարի 1-ից մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար պետական տուրքի սահմանմամբ, որի գծով հաշվետու ժամանակահատվածում մուտքագրվել է 759.9 մլն դրամ՝ 55.3%-ով ապահովելով առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշը: Բացի այդ, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ աճել են նաև բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների ու տրանսպորտի բնագավառներում գանձվող տուրքերը՝ համապատասխանաբար 5.9 անգամ (234.2 մլն դրամով) և 10.4 անգամ (219.4 մլն դրամով): Իսկ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվող տուրքերի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար գանձվող տուրքերի 3.2 անգամ (554 մլն դրամով) աճով:

ՊԵԿ կողմից հաստատված եզրակացությունների հիման վրա 2020թ. առաջին եռամսյակի և նախորդ համադրելի ժամանակաշրջանի ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի, բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված (այդ թվում հարկային ուսումնասիրությունների արդյունքում) և ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով վերադարձված գումարների, ինչպես նաև վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով համադրելի ցուցանիշները հետևյալն են՝

(Աղյուսակ 4)
մլն.դրամ

ՀՀ	Ցուցանիշ	2019թ.	2020թ.	
		Հունվար-մարտ	Հունվար-մարտ	Աճի տեմպ %
1	2	3	4	5
1	ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումար	15,015,782.5	17,927,244.9	119.4
2	Հաշվետու կիսամյակին և եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումար	9,820,850.8	13,792,085.9	140.4
3	ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումար	145,137.9	86,206.6	59.4
4	Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գծով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վճարման հանձնարարականների հանրագումար	1,558,546.5	2,796,636.0	179.4
5	**ԸՆԴԱՄԵՆԸ**	26,540,317.7	34,602,173.4	130.4

2020թ. առաջին եռամսյակում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած ԱԱՀ-ի փոխհատուցված գումարները կազմել են 17,927.2 մլն դրամ, որը նախորդ համադրելի ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է 19.4 տոկոսով, նմանապես՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի գծով միասնական հաշվին մուտքագրված գումարը , նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ ավելի են 40.4 տոկոսով: Ի տարբերություն ԱԱՀ-ի մասով վերը նշված փոխհատուցված գումարների, ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ նվազել են 59.4 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է COVID-19-ի հանգամանքով:

Վարկառուներին և համավարկառուներին հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարը նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ աճել է 79.4 տոկոսով:

2020 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե վճարված հարկային եկամուտներն ու պետական տուրքերն ըստ եկամտային հաշիվների և ծախսային ուղղությունների հետևյալն է.

(Աղյուսակ 5)

Բյուջե մուտքերն ըստ եկամտային հաշիվների. հազ.դրամ

Ժամանակահատված	**Հարկերի միասնական հաշվից բյուջե մուտքեր**	**Այլ հաշիվներից բյուջե հարկային մուտքեր**	**Մաքսային ծառայության կողմից գանձված գումարներ**	**Ընդամենը բյուջե հաշվեգրված եկամուտներ**
2020թ. 1-ին եռամսյակ, այդ թվում՝	303,478,601	15,649,689	65,095,549	384,223,840
Հունվար	133,445,780	5,965,293	21,214,740	160,625,812
Փետրվար	67,231,868	4,352,398	21,001,219	92,585,485
Մարտ	102,800,953	5,331,999	22,879,590	131,012,542

(Աղյուսակ 5.1)

Բյուջեի եկամուտներից կատարված վերադարձները. հազ.դրամ

Ամիս	**Անցումային գերավճարից վերադարձ հարկատուներին**	**Դեբետային գերավճարից վերադարձ հարկատուների**ն (այդ թվում՝ ՊԵԿ եզրակացություն ների համաձայն վերադարձված)	**Վարկառու ներին հիպոտեկ ային վարկի սպասարկմ ան համար վճարված տոկոսներ**	**ԱԱՀ-ի վերադարձ** (Tax free)	**Այլ ելքեր**	**Ընդամենը հարկերից վերադարձներ ի գումարը**
Հունվար	56,203	13,420,945	358,516	25,973	65,463	13,927,099
Փետրվար	27,404	5,155,686	2,009,365	15,212	73,812	7,281,479
Մարտ	51,140	13,429,330	416,063	45,022	39,254	13,980,809
Ընդամենը	134,747	32,005,961	2,783,944	86,207	178,529	35,189,387

2020թ. առաջին եռամսյակի արդյունքներով պետական բյուջե զուտ մուտքերը՝

(Աղյուսակ 5.2)

հազ.դրամ

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	Հունվար	Փետրվար	Մարտ	2020թ. 1-ին եռամսյակ
	146 698 714	85 303 967	117 031 737	349 034 453

2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի առաջին եռամսյակում արտաքին աղբյուրներից ստացվել են ավելի քան 1.8 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով առաջին եռամսյակում ծրագրված մուտքերի 33.3%-ը: Մասնավորապես՝ ստացվել են հետևյալ պաշտոնական դրամաշնորհները.

1. Եվրամիության կողմից բյուջետային աջակցության ծրագիր՝ Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումներ 929.5 մլն. դրամ,
2. Նպատակային դրամաշնորհներ՝ 882.6 մլն. դրամ

այդ թվում՝

- Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկից 322.4 մլն. դրամ
- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից 280.6 մլն. դրամ
- Գլոբալ հիմնադրամ 156.5 մլն. դրամ
- Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) 83.9 մլն. դրամ
- ԱՄՆ-ի աջակցությամբ 39.2 մլն. դրամ

Դրամաշնորհների կատարողականը պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարողականով, որոնց շրջանակներում ստացվել է 882.6 մլն դրամ կամ նախատեսված ցուցանիշի 16.2%-ը:

Շուրջ 11 ծրագրերի մասով նախատեսված 3.4 մլրդ դրամ դրամաշնորհները չեն ստացվել, իսկ 5 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են ոչ ամբողջությամբ՝ 30%-ով, որը կազմել է 543.9 մլ դրամ, իսկ 2 ծրագրերի շրջանակներում ստացվել են ծրագրվածից ավելի դրամաշնորհներ, որոնք կազմել են 338.7 մլն դրամ և 58.6%-ով կամ 125.2 մլն դրամով գերազանցել եռամսյակային ծրագիրը:

2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ստացված նպատակային դրամաշնորհներից 322.4 մլն դրամ (նախատեսվածի 92.1%-ը) տրամադրվել է Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի, 280.6 մլն դրամ (նախատեսվածի 19.8%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, 156.5 մլն դրամ (նախատեսվածի 50%-ը)՝ Գլոբալ հիմնադրամի, 83.9 մլն դրամ (նախատեսվածի 12.7%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW), 39.2 մլն դրամ (նախատեսվածի 41.%-ը)՝ ԱՄՆ-ի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում պետական բյուջե մուտքագրված պաշտոնական դրամաշնորհները 64.6%-ով կամ 3.3 մլրդ դրամով զիջել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները 2020 թվականի առաջին եռամսյակում կազմել են 19.4 մլրդ դրամ՝ 33.9%-ով գերազանցելով առաջին եռամսյակում ծրագրված և 29.4%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Մասնավորապես այլ եկամուտներից՝

5.5 մլրդ դրամը ստացվել է ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից՝ 21.9%-ով գերազանցելով եռամսյակային ծրագրային ցուցանիշը, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտները նվազել են 6.4%-ով,

4. 0 մլրդ դրամը կազմել է հաշվետու ժամանակահատվածում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարները՝ 25.1%-ով գերազանցելով առաջին եռամսյակում ծրագրված մուտքերը և 81.9%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը,

3.8 մլրդ դրամը կազմել է պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց հաշվետու ժամանակահատվածում ստացված տոկոսավճարները, որոնք 62.5%-ով գերազանցել են առաջին եռամսյակում ծրագրված մուտքերը և 2 անգամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը,

3.7 մլրդ դրամը կազմել է 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը՝ 25.4%-ով գերազանցելով առաջին եռամսյակում ծրագրված մուտքերը և 27.8%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանք

Արձանագրության «1. Հարկային եկամուտների վերաբերյալ» բաժնի այլ հարկերի վերլուծության մեջ ընդրկված հարկային օրենսդրության խախտման համար սահմանված 594.2 մլն դրամ տուգանքները պետք է լինեն 794.9 մլն դրամ:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություն

Հարկային օրենսդրության խախտման համար սահմանված տուգանքների տվյալների համար աղբյուր է հանդիսացել ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակված «Պետական բյուջեի կատարման վերաբերյալ ամսական տեղեկատվությունը»:

Առաջարկում ենք ուղղել նախարարության պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվությունը:

II. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքով ֆինանսների նախարարության կողմից իրականացվող ծախսերի տարեկան պլանը սահմանվել է 234.2 մլրդ դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 228.5 մլրդ դրամ: 2020 թվականի առաջին եռամսյակի տարեկան պլանը կազմում է 53.57 մլրդ դրամ, ճշտված պլանը՝ 53.58 մլրդ դրամ, իսկ ֆինանսավորումը կազմել է 52.2 մլրդ դրամ: Ֆինանսների նախարարության կողմից իրականացված փաստացի ծախսը կազմել է 52.26 մլրդ դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 52.16 մլրդ դրամ: Ստորև ներկայացված է 2019 և 2020 թվականների առաջին եռամսյակների ծախսերի կատարողականների համեմատականը.

(Աղյուսակ 6)

Հազ. դրամ

Ժամանակաշրջան	**Առաջին եռամսյակի ճշտված պլան**	**Ֆինանսավորում**	**Դրամարկղային ծախս**	**Փաստացի ծախս**	**Կատարման %-ը** 6=4/2 x100%
1	2	3	4	5	6
2019 1-ին եռ.	53,776,981.2	50,408,812.5	49,187,192.2	49,291,500.3	91.47%
2020 1-ին եռ.	53,582,543.3	52,203,424.4	52,163,788.2	52,265,508.2	97.35%

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից ֆինանսների նախարարության կողմից կատարվող ծախսերի տարեկան պլանը սահմանվել է 234,248,291.25 հազ.դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 228,503,495.51 հազ.դրամ, իսկ 2020թ. առաջին եռամսյակի ճշտված պլանը՝ 53,582,543.29 հազ.դրամ, ֆինանսավորումը՝ 52,203,424.4 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 52,163,788.19 հազ. դրամ: Կատարողականը կազմել է 97.35 տոկոս:

ՀՀ Ֆինանսների նախարարության 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականը ըստ ծրագրերի հետևյալն է.

(Աղյուսակ 7)
Հազ. դրամ

Ծրագրի կոդ	Ծրագիր, հոդված	Հաշվետու ժամանակա-հատվածի ճշտված պլան	Ֆինանսա-վորում	Դրամարկղայի ն ծախս	Փաստացի ծախս	Կատա ր ման %-ը
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	53,582,543.29	52,203,424.40	52,163,788.19	52,265,508.25	97.35
01010209	Արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող ծախսեր	31.00	-	-	-	-
01010202	ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում	-	-	-	-	-
01010208	Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների տեղադրման և սպասարկման վճար	7,507.30	7,331.60	7,331.60	7,331.60	97.66
01070101	Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)	38,589,543.83	37,754,655.56	37,754,655.55	37,754,655.55	97.84
	- Ներքին արժեթղթերի տոկոսավճարներ	-	13,903,626.60	13,903,626.60	13,903,626.60	-
	- Արտաքին վարկերի գծով տոկոսավճարներ	-	23,851,028.96	23,851,028.95	23,851,028.95	-

01070102	Մուրհակների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	23,603.00	23,543.01	23,543.01	23,543.01	99.75
10090201	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	5,508.00	3,974.00	3,948.00	3,948.00	71.68
01060114	ՀՀ ֆինանսների նախարարության և ՌԴ ֆինանսների նախարարության միջև՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագիր	9,900.00	-	-	-	-
01060120	Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ ձեռքբերում	455,090.80	-	-	-	-
09050202	Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ	4,900.00	-	-	-	-
03030204	Անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցում	8,500.00	4,470.00	4,470.00	4,470.00	52.59
01010201	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	474,177.80	454,007.89	414,397.69	516,117.75	87.39
	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	298,956.00	298,956.00	262,492.71	359,780.30	87.80
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	58,966.70	58,966.70	58,790.19	59,245.66	99.70
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	79,348.00	79,348.00	79,348.00	79,348.00	100.00
	- Ներքին գործուղումներ	8,990.40	8,990.40	6,020.00	6,718.80	66.96
	- Համակարգչային ծառայություններ	3,643.00	820.04	820.04	820.04	22.51
	- Այլ հոդվածներ	24,273.70	6,926.75	6,926.75	10,204.95	28.54

01010204	Ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծախսեր	36,741.00	5,538.26	5,538.26	5,538.26	15.07
01010308	Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարման ծախսեր	80,816.70	80,164.69	80,164.69	80,164.69	99.19
04090120	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	4,700.39	4,700.39	4,700.39	4,700.39	100.00
01010219	Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	729.87	729.87	729.87	729.87	100.00
01010206	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում	-	-	-	-	-
01010210	Էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում	4,925.00	-	-	-	-
01010205	Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման գծով պետական պատվեր	29,990.00	18,430.53	18,430.53	18,430.53	61.46
01060111	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	-	-	-	-	-
01060125	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգում	-	-	-	-	-

01060124	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում	-	-	-	-	-
10040110	Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	1,236.50	1,236.50	1,236.50	1,236.50	100.00
01080101	Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրում և Ազգային Ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցում	13,844,642.10	13,844,642.10	13,844,642.10	13,844,642.10	100.00
	- Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	13,828,071.70	13,828,071.70	13,828,071.70	13,828,071.70	100.00
	- Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում	16,570.40	16,570.40	16,570.40	16,570.40	100.00

1. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 2,495,967.9 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին եռամսյակի պլանը կազմել է 474,177.8 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկղի ծախսը՝ 414,397.7 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 59,780.1 հազ.դրամ:

Նշված ծրագրի շրջանակներում ծախսերն ունեն հետևյալ կատարողականները.

(Աղյուսակ 8)
հազ.դրամ

Ծրագիր (հոդված)	2020**թ. առաջին եռամսյակի ճշտված պլան**	**Ֆինանսավորում**	**Դրամարկղի ծախսը**	**Փաստացի ծախս**	**Կատարման %-ը** 6=4/2 x100%
1	2	3	4	5	6
Ընդամենը	474,177.80	454,007.89	414,397.69	516,117.75	87.39
Աշխատանքի վարձատրություն	437,270.70	437,270.70	400,630.90	498,373.96	91.62
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	21,056.68	4,714.09	4,714.09	7,752.71	22.39
Այլ ծախսեր	15,850.42	12,023.1	9,052.7	9,991.08	57.11

Աշխատանքի վարձատրության գծով փաստացի ծախսը կազմել է 498,373.96 **հազ. դրամ**, դրամարկղի ծախսը՝ 400,630.9 **հազ. դրամ**, աշխատանքի վարձատրության մասով առաջին եռամսյակի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքը կազմում է 97,229.51 **հազ. դրամ**:

Աշխատանքի վարձատրության գծով ծախսի (դրամարկղի ծախսի) կատարողականը կազմել է 91.62 տոկոս, ծառայությունների և ապրանքների ձեռքբերումների և այլ ծախսերի գծով ծախսերի կատարողականները համապատասխանաբար կազմել են 22.39 տոկոս և 57.11 տոկոս:

Եռամսյակի ճշտված պլանի համեմատ տարբերությունը հիմնականում պայմանավորված է մարտ ամսին նախատեսված որոշ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման մրցույթների՝ COVID-19-ի հետևանքով հետաձգվելու հանգամանքով:

2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«Կառավարության պարտքի սպասարկում» ծրագրի շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 168,023,209.15 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին եռամսյակի պլանը կազմել է 38,589,543.83 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկղի ծախսը՝ 37,754,655.55 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 834,888.28 հազ.դրամ:

Նշված ծրագրի շրջանակներում ծախսերը ունեն հետևյալ կատարողականները.

(Աղյուսակ 9)
Հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	2020**թ. առաջին եռամսյակի ճշտված պլան**	**Ֆինանսավորում**	**Դրամարկղային ծախս**	**Փաստացի ծախս**	**Կատարման %-ը** 6=4/2 x100%
1	2	3	4	5	6
Ընդամենը	38,589,543.83	37,754,655.56	37,754,655.55	37,754,655.55	97.84
Ներքին արժեթղթերի տոկոսավճարներ	13,928,112.40	13,903,626.60	13,903,626.60	13,903,626.60	99.82
Արտաքին վարկերի գծով տոկոսավճարներ	24,661,431.40	23,851,028.96	23,851,028.95	23,851,028.95	96.71

Ծրագրի շրջանակներում պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման մասով ունենք թերակատարում 24,485.8 հազ. դրամի չափով: Թերակատարումը ֆինանսների նախարարության կողմից մեծամասամբ պայմանավորվել է կատարված կանխատեսման և փաստացի եկամտաբերության տարբերությամբ:

Արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկման մասով ստացվել է 810,402.48 հազ. դրամի թերակատարում, որը Նախարարության կողմից մեկնաբանվում է 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, 6-ամսյա EURIBOR կանխատեսումային դրույքաչափերի և 2020 թվականի առաջին եռամսյակի վճարումների համար կիրառված փաստացի դրույքաչափերի տարբերության հանգամանքով, ինչպես նաև մի շարք վարկերի գծով մասհանումների պլանային ցուցանիշների էական թերակատարումներով:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի պարտքերի հանրագումարը) կազմել է 3,513.4 մլրդ դրամ կամ 7,324.2 մլն ԱՄՆ դոլար: Աղյուսակում 10-ում ներկայացված է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքի կառուցվածքը:

(Աղյուսակ 10)

Մլրդ դրամ

Պարտքի կառուցվածքը	31.12.2019	31.01.2020	29.02.2020	31.03.2020
ՀՀ պետական պարտք	3,513.4	3,515.2	3,519.4	3,650.7
որից՝				
ՀՀ կառավարության պարտք	3,278.7	3,282.8	3,287.2	3,400.6
այդ թվում՝				
արտաքին պարտք	2,541.5	2,520.8	2,513.8	2,615.2
այդ թվում՝				
արտաքին վարկեր և փոխառություններ	2,067.3	2,049.5	2,041.9	2,128.8
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	3.3	3.4	3.3	3.3
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր	467.1	464.2	464.9	479.2
արտաքին երաշխիքներ	3.8	3.7	3.7	3.9
ներքին պարտք	737.2	762.0	773.3	785.4
այդ թվում՝				
ներքին վարկեր և փոխառություններ	-	-	-	-
ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	677.7	700.8	712.9	715.0
ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր	59.5	61.3	60.4	70.5
ներքին երաշխիքներ	-	-	-	-
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք	234.7	232.4	232.2	250.2
Որից՝				
ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր	61.9	60.7	60.8	63.6

2020 թվականի 1-ին եռամսյակում ՀՀ պետական պարքտը կազմել է 137.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական պարտքի ծավալն աճել է 113.3 մլրդ դրամով կամ շուրջ 4.7 անգամ: Կառավարության պարտքի ծավալն աճել է 112.2 մլրդ դրամով կամ շուրջ 4.5 անգամ, Կենտրոնական բանկի արտաքին պարտքի ծավալն աճել է 15.5 մլրդ դրամով (Աղյուսակ 11):

(Աղյուսակ 11)

Մլրդ դրամ

	31.12.2018	31.03.2019	2019 **թ.** 1-**ին եռամսյակ**	31.12.2019	31.03.2020	2020 **թ.** 1-**ին եռամսյակ**
ՀՀ պետական պարտք	3,348.8	3,372.8	24.0	3,513.4	3,650.7	137.3
որից՝						
ՀՀ կառավարության պարտք	3,082.7	3,107.9	25.2	3,278.7	3,400.6	121.9
այդ թվում՝						
արտաքին պարտք	2,412.1	2,408.4	-3.7	2,541.5	2,615.2	7.3
այդ թվում՝						
արտաքին վարկեր և փոխառություններ	2,002.6	1,997.3	-5.3	2,067.3	2,128.8	61.5
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	3.6	3.4	-0.2	3.3	3.3	0.0
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր	402.1	403.9	1.76	467.1	479.2	12.1
արտաքին երաշխիքներ	3.9	3.8	-0.1	3.8	3.9	0.1
ներքին պարտք	670.5	699.5	29.0	737.2	785.4	37.2
այդ թվում՝						
ներքին վարկեր և փոխառություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	584.5	612.5	28.0	677.7	715.0	37.3

ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր	81.7	82.6	0.1	59.5	70.5	11.0
ներքին երաշխիքներ	4.4	4.4	0.0	0.0	0.0	0.0
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք	266.1	265.0	-1.1	234.7	250.2	15.5
որից						
ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր	68.9	68.1	-0.1	61.9	63.6	1.7

Աղյուսակ 11-ից պարզ է դառնում, որ Կառավարության արտաքին պարտքը 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ կազմել է 2,615.2 մլրդ դրամ, որից 2,128.8 մլրդ դրամն արտաքին վարկեր և փոխառություններից, իսկ 479.2 մլրդ դրամը՝ ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսերից:

Հաշվեքննությամբ պարզ դարձավ, որ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում արտաքին վարկերի և փոխառությունների մասով կատարվել են հետևյալ մարումները/սպասարկումները (Աղյուսակ 12):

Աղյուսակ 12

Հազ. դրամ

Հաշվետու ամսում վճարված	**Հունվար**	**Փետրվար**	**Մարտ**
Մարում	8,607,922.44	8,398,129.28	8,356,274.88
Սպասարկում (տոկոս)	2,843,276.15	3,812,195.23	2,619,576.55
Ընդամենը	11,451,198.59	12,210,324.51	10,975,851.43

2020 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում պետական արտարժութային պարտատոմսերի սպասարկման գծով կատարվել են հետևյալ վճարումները (Աղյուսակ 13):

Աղյուսակ 13

ՀՀ	Պետական արտարժութային պարտատոմսեր	Տոկոսավճար	
		ԱՄՆ դոլար	հազ. դրամ
1	2020թ. մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսեր	$ 2,929,710.00	1,395,889.63
2	2025թ. մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսեր	$ 17,875,000.00	8,516,722.50
3	2029թ. մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսեր	$ 9,875,000.00	4,705,042.50
Ընդամենը՝ 2020թ. առաջին եռամսյակ		$ 30,679,710.00	14,617,654.63

Հարկ է նշել, որ պետական արտարժութային պարտատոմսերի մասով մարումներ կամ հետգնումներ նշված ժամանակահատվածում չեն իրականացվել:

Կառավարության ներքին պարտքը 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ կազմել է 785.4 մլրդ դրամ, ինչը ձևավորվել է ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից պետական գանձապետական պարտատոմսերի ձեռքբերումից:

2020 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի գծով իրականացված գործառնությունները արտացոլված են Աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14

մլն դրամ

	31.01.2020թ. **դրությամբ**	29.02.2020թ. **դրությամբ**	31.03.2020թ. **դրությամբ**	**Ընդամենը**
ՊԳՊ ընդ. շրջանառության ծավալ	704,134.83	716,222.45	718,228.50	
Տեղաբաշխում	26,813.47	17,446.58	12,259.57	56,519.62
Տեղաբաշխումից մուտք	28,746.99	18,396.17	12,606.76	59,749.91
Մարում/հետգնում	3,635.14	5,236.75	10,023.93	18,895.82
Սպասարկում	203.26	4,764.25	8,936.12	13,903.63

3. ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«Մուրհակների սպասարկում» ծրագրի շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 93,232.0 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին եռամսյակի պլանը կազմել է 23,603.0 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկղի ծախսը՝ 23,543.01 հազ.դրամ, ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 59.99 հազ.դրամ:

Թերակատարումը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, կապված է 1-ին եռամսյակում մարման ենթակա մուրհակների մուրհակատերերի կողմից թվով 4 մուրհակների վճարման հայտերի չներկայացմամբ:

4. ԴՈՏԱՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

«Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրում և Ազգային Ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 55,378,535.0 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին եռամսյակի պլանը կազմել է 13,844,642.1 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը, դրամարկղի ծախսը՝ 13,844,642.1 հազ. դրամ:

Նշված ծրագրի շրջանակներում ծախսերը ունեն հետևյալ կատարողականները.

(Աղյուսակ 15)
Հազ. դրամ

Ծրագիր (հոդված)	2020**թ. առաջին եռամսյակի ճշտված պլան**	**Ֆինանսավորում**	**Դրամարկղային ծախս**	**Փաստացի ծախս**	**Կատարման %-ը** 6=4/2 x100%
1	2	3	4	5	6
Ընդամենը	13,844,642.1	13,844,642.1	13,844,642.1	13,844,642.1	100.0
Պետական բյուջեից համայնքների	13,828,071.7	13,828,071.7	13,828,071.7	13,828,071.7	100.0

բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ					
Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում	16,570.4	16,570.4	16,570.4	16,570.4	100.0

5. ՌԴ ԿՈՂՄԻՑ ՀՀ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրում» ծրագրի շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 1,820,363.1 հազ.դրամ գումար, 2020թ. առաջին եռամսյակի պլանը կազմել է 455,090.8 հազ.դրամ, նույնքան էլ ճշտված պլանը: Ծրագրի շրջանակներում դրամարկղի ծախսը կազմել է 0 դրամ, իսկ ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 455,090.8 հազ.դրամ:

Ծրագիրը չի իրականացվել, ինչի կապակցությամբ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է հիմնավորում, մասնավորապես՝ մրցութային փաստաթղթերի մշակման և ավարտական տեսքի բերելու համար ներգրավելիք միջազգային խորհրդատուի հետ պայմանագրի կնքելու գործընթացի երկարաձգմամբ պայմանավորված, մրցույթային փաստաթղթերը դեռ չեն ներկայացվել, մրցույթները չեն անցկացվել և համապատասխան միջոցառումներ չեն իրականացվել:

III. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաջարկում ենք ուղղել ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակված «Պետական բյուջեի կատարման վերաբերյալ ամսական տեղեկատվությունը» հաշվետվությունը, որտեղ հարկային օրենսդրության խախտման համար սահմանված տուգանքները հրապարակված են 594.2 մլն դրամի չափով, սակայն պետք է նշված գումարի իրական չափը կազմում է 794.9 մլն դրամ: